


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄԶԸ.
Պոլսոյ համար 10 ՄԶԸ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ համար 4 ՄԶԸ.
Պոլսոյ համար 5 ՄԶԸ.
Շաբաթական տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, տուրքի տնդամներու
համար գատ սակարկութիւն կը-
լայ :



ՀԱՅԿԱՍՏԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 17 ԴԵՑԱԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բնական ընդհանուր վրայ լուծած
զրոյցները տակաւին խիստ հակասա-
կան և անստորոգ են : Օսման վաշա-
լին իւր բոլոր զորութեամբ Բլէֆուս-
թէն ելնելով թշնամոյն դիմերը իւր-
զած և Ռազովա քաղաքը ըլլալուն
լուրը, զոր Զեքէի հեծեալ մը Մէհ-
մէտ Ալի վաշալին բերեր է եղեր, և
հաստատութիւն չգտաւ : Բ. Գուսն
հեռագրեց Րումէլի զինուորական
հրամանատարաց, որպէս զի Բլէֆուս-
թէ վրայ իրենց առած տեղեկութիւննե-
րն իրեն հաղորդեն : Պատիւէն իսկ
կը պարտաւորի խոստովանել թէ Բլ-
էֆուսթէն բոլորակէն հարկւր յիսուն
հազար Ռուս զօրք, այն է 170 վաշտ
հետեակ և 120 վաշտ հեծեալ կայ
վեց հարկւր յիսուն թնդանթով,
ուստի անկարելի էր Օսման վաշալին
իւր բոլոր զորութեամբ Բլէֆուսթէն ել-
նել իր թաւ : Բեռնի վաշալին կիրակի
օրը Բ. Գուսն եկած հեռագրի մը կը
ժանուցանէր թէ Շիբկայի կրճին մէջ
Բլէֆուսթէն կողմէն թնդանթով որոտ-
մունք կը լուծէին, ուրկէ կը հետեւէր
թէ Օսման վաշա տակաւին հոն է և
թշնամոյն հետ կը կռուէ : Այս լու-
րերուն ամենն ալ դրական իրողու-
թիւն մը չեն ժանուցաներ : Ուստի կը
յուսաւորուի որ Եւրոպական թղթաբե-
րով եկած լուրերն աւելի իրական տե-
ղեկութիւններ տան :

Մէհմէտ Ալի վաշալին գործողու-
թեանց վրայ ալ ուղղակի լուր չկայ :
Վրայն թէ նոյն 8/20 թուոյ Ձիւթովէն
հեռագրեր մը Ռուսաց Օրլանովի մօ-
տերը մէկ պարտութիւն կը ծանու-
ցանէ : Նոյն օրը Ռուսաց Լէօնով
զորավարը Լօյանի Օսմանեան դրեց
վրայ յարձակած էր, որ Օրլանովի
հիւսիսային արևմտեան կողմն և ան-
կէ քանի մը մղոն հեռու է : Օսմանեան
զօրքն օգնութիւններ ստանալով Լէօ-
նովի զօրավարն ետ քաշու ելու պար-
տաւորեցին : Այս զօրավարը Ռուսաց
յաջողակ զինուորական հրամանատար-
ներէն մին է, որ Սքոպլէի արշա-
ւանաց կը գործակցէր դեռ մօտերու
իսկ Սքոպլէի Բլէֆուսթէն տուրքն նոյն
3/13ին գլխերէն եղած յարձակմանց
առթիւ վերադարձեր է :

Սիւլէյման վաշալին նոյն 12/24 թը-
ւով հեռագրերը կարեւոր դէպքեր
չեն ծանուցաներ, թէ և պահ մը զրոյց
եղաւ թէ Գանուբի կայսերական բա-
նակին ընդհանուր հրամանատարը Պի-
էլայի վրայ կը քալէ : Ձինուորական
տեղեկութիւններ մէջ կը տուի թէ առ այ-
ժմ Գանուբեան բանակէն կարեւոր
գործողութիւններ չեն կրնար սպաս-
ւիլ, քանզի մէկ կողմէն Ռուսաց թա-
գաթաւանդ Մեծ դըմին բանակն և

միւս կողմէն Տօպրուհայի մէջ Ձիւթու-
մանի բանակը Սիւլէյման վաշալին շար-
ժումները կարգեցին :

Բեռնի վաշան Պալքանի բանակը
թողուց և Ալբանիոյ մօտեւ եկաւ, ուր
նորակազմ պահեստի զօրաց հրամա-
նատար կարգուած է : Այս բանակն,
որ հարկւր յիսուն հազար զօրքէ պի-
տի բաղկանայ, և ուր Օսմանեան հը-
պատակ քրիստոնեայներն ալ խառնաց
հաւասար պիտի ընդունուին, նորա-
կազմ Մէֆթիպի Հիւսայունին հետ պի-
տի միանայ : Բեռնի վաշան Րումէլի
կողմէն և Էօմէր Ֆէվի վաշան ալ Անա-
տօլի կողմը պահեստի զօրաց հը-
րամանատար կարգուած են : Իսկ
Պալքանի բանակին հրամանատար Ահ-
մէտ Էյուպ վաշան շարժւի օրը մայ-
րաքաղաքէն մեկնեցաւ յԱլբանիո-
պոլիս, ուսկից ալ Շիբկայի կիւմը պի-
տի երթայ :

Հայաստանէն թէ և պաշտօնական
լուրեր չկան, սակայն վերջին թըղ-
թաբերով եկած Եւրոպական թեր-
թերը կարսի առման վրայ Ռուսա-
կան աղբիւրներէ հեռագրեր կը հը-
րատարակեն : Յարձակումը նոյն 3/17
շաբաթ գլխերէն եղեր է : Կազարէֆ զ-
րավարը քառասուններորդ զօրաբա-
նին գլխի կեցած յարձակող զօրաց
աջ թերը կը կողմէր և Հաֆիզ վաշա
թապեալեանի Ժայռոտ բարձանց վրայ
քալեր է : Զօրավար կոմս Կրայ Երե-
սունքորդ զօրաբանին մէկ գուն-
դովը Գանուբ Թապեալի, Սրայ Թապ-
եալի և միջնաբերդին վրայ քալեր
է : Արտահանի զօրաբաժինն և Մօս-
քովայի կրննաթիւ զօրաց երկրորդ
գունդն ալ Ռուս և Քուսանի զօրա-
վարաց ներքե ինկիլիթ թապեալի
վրայ դնացեր է : Գիշերն ըստ Եւրո-
պացւոց ժամ 8 1/2ին յարձակումը
կեդրոնէն սկսեր է, և զօրավար կոմս
Կրայ անձամբ իւր զօրաց գլխիւ
կենտրոն բարձրաւանդակներէն յար-
ձակած Ժամանակ զարնուեր մեռեր
է : սակայն իւր սպայակոյտէն ֆրիա-
տինքի հարկւրապետն և անոր զօր-
քերն յաջողեր են սուրին ծայրով մե-
տասաներորդ ամբոյցին տիրել և զայն
պահել : Պատերազմը տարաւիելի ե-
ղեր է, քանզի երկու կողմն ալ բոլոր
գլխերը դէմ առ դէմ կռուեր են :
Առաւօտուն կանուխ Պալքանի վաշալին
մեծ ամբողջութիւն տոնուեր է, և
հետզհետէ Օսմանցիք ստատիկ դի-
մադրութիւնէ ետեւ հարկադրուեր են
Հաֆիզ վաշա, Գարաթապ, Գանուբ,
Թահմա և Արայ Թապեալի անուն
ամբոյցներն և վերջապէս միջնաբեր-
դին երեք աշտարակները թողուլ :
Այն ատեն ամեն բան վերջացեր է :
Օսմանեան զօրքը սաստիկ ջանքեր
է Օլթիի ծանաղարհէն թշնամոյն դի-
մերը պատուելով անցնել, բայց իւր
այս ճիգն չի դերեւ ելեր է : Բազմա-
թիւ Ռուս հեծեալզօրաց կողմէ, որք

ծանաղարհները բռնած էին : Միայն
Օսմանեան հրամանատար Հիւսէյն
Համի վաշան սակաւաթիւ հեծեալ-
ներով կրցեր է փախչիլ աղաթիւ : Կի-
րակի առաւօտ 6/18 նոյն Միքայէլ
Մեծ դուքան և Լորիս Մէլիքով զօ-
րավարն հանդիսաւոր կերպիւ Կարս
մտեր են : Օսմանեան զօրաց կորուս-
տը հինգ հազար մեռեալ և վիրա-
ւոր կը հաշուի, մինչդեռ Ռուսք ի-
րենց կորուստն երեք հազարի չափ
կը ցուցնեն : Ռուսաց հեռագիրը կը
ժանուցանէ թէ երկու հարկւր ութ-
սուն թնդանթով, բազում ռազմաւը-
թերը և սպաշար անցեր է իրենց ձեռ-
քը : Գերեայ թիւն Եօմէր հաղար է ե-
ղեր, որոց մէջ երկու վաշա կային, ինչ-
պէս նաեւ Օսմանեան թնդանթով մի-
ջօրաց հրամանատարը : Կարսի մէջ
չորս հազարի չափ ալ հիւանդ և վի-
րաւոր կային, ուստի Մեծ դուքան
ինդեր է անձնատուր եղող Օսման-
եան զօրաց այն վերաբոյժներէն որք
Եւրոպական վկայագիր ունէին, որ-
պէս զի հիւանդանոցները մնան և ի-
րենց պաշտօնը շարունակեն : Մէլի-
քով զօրավարը Կարսի մէջ զօրք դնե-
լէ և քաղաքին վարչութեան համար
պաշտօնատարներ կարգեց ետեւ : Նոյն
10/22ին երեքշաբթի օրն իւր մնաց-
եալ զօրքը դէպի Կարս քալել սկսեր
է Հէյման զօրավարին հետ միանալու
համար :

Լէվրէթ Հէյլլա լրագրին Կարնոյ
թղթակիցը Տէվէ-Պոյնուի և Թօփ-
Տաղիի պատերազմաց օրագրութիւնը
կրնէ, որ խիստ հետաքրքրական է :
Օսմանեան զօրքն Եփրատ գետին ջու-
րերը դարձնելով արուեստական հե-
ղեղ մը հանած էին : Նոյն 4ին կիրա-
կի օրը Ռուսք իրենց Գուրուսուքի
գլխիւն երեսուն թնդանթով Օս-
մանեան զօրաց կեդրոնին վրայ յար-
ձակեր են : Նոյն միջոցին երկու ըստ-
ւար զօրագունդեր ալ մին Օլթիի ծա-
նաղարհէն և միւսը Կարնոյ հիւսի-
սային կողմէն կը յառաջանային : Ռուսք
քանի մ'անգամ յարձակեր և ետ
մղուեր են, բայց ծախսատարաւ կը
շարունակէր, և Ռուսաց թնդանթով
ձիգ զօրքն անչափ յաջողակ կերպիւ
ուսմի կարճակէր, որ 16 Օսմանեան
թնդանթովներէն տասնմեկին անիւ-
ները ջախջախեր են : Յետոյ երեք
թնդանթով ալ կործաներ են : Բիֆաթ
վաշա և անոր տեղն անցնող Արիֆ
վաշա վիրաւորուեր են : Անոր վրայ
Օսմանեան զօրքը փախչիլ սկսեր են :
Մուսթաֆա վաշա չի դուր ջանացեր
է զանոնք քաշալերելով թշնամոյն
դէմ գլխիւ, և ձեռքը մնացած երեք
վաշալով գլխիւ գերեր է թշնամոյն,
բայց յիշեալ վաշաերուն հրամանա-
տարը ուսմիով գլխէն զարնուելով
մեռեր է : Կարնոյ դուռներուն առ-
ջն տեսարանը խիստ սարսափելի էր :

Խուսի մը զինուոր՝ պարսպին դուռ-
ները դարձուցած՝ հրացանի սուրն
ներով փախտականներն ետ դարձը-
նել կուգէին թշնամոյն դէմ : Նոյն
միջոցին հեծեալ հարկւրապետ մը
հասնելով ըսեր է թէ Միւշիլին հը-
րամանաւ պէտք է որ դուռները բաց-
ւին : Բայց ուրիշ սպայ մը վրայ հաս-
նելով հարկւրապետը յանդիմաներ է
թէ սուտ կը խօսէր, և ասոր ճանակով
զարկեր սպաններ է : յետոյ սուրը
քաշելով փախտականներն ստիպել
սկսեր է որ ետ դառնալով թշնամ-
ոյն հետ կռուին, բայց տասնի չափ
վատեր անոր վրայ յարձակելով զար-
կեր սպաններ են : Մնացեալ զօրքը
րը վախճալով դուռները բացեր են,
և փախտականք ներս խուսիւր են :
Կարնոյ քաղաքին մէջ սարսափ տիրած
և խանութները դողուած էին : Հե-
տեալ օրը Ռուսաց կողմէն պատգա-
մաւոր մը գալով քաղաքին յանձնուի-
լուն առաջարկեր էր, բայց Մուսթաֆա
վաշան վէճ : Մուսթաֆան հարցնելով
հրաման ստացեր է մինչև վերջը գի-
մադրել, և բնակացի ոմանց ընդ-
դիմութեան հակառակ՝ պատերազ-
մելու պատրաստուեր և խառն բնա-
կիւններն ի դէն հրաւիրեր է : Նոյն 9ին
ուրբաթ օրը Ռուսք Թօփ-Տաղիի և
Քիլիսիայի թապեալի վրայ յարձա-
կեր, բայց երեք հազարի չափ կո-
րուստ տալով յետոյ նահանջեր են :
Պատերազմող Ռուսաց թիւը քսան
քսան հինգ հազար էր, իսկ Օսման-
եանը 12 հազար : Այս վերջիններուն
կորուստն 1500 եղեր է : Ռուսաց ըս-
պայակոյտը Լուսաւորչի վերքը հաս-
տատուած է եղեր, և Տէվէ-Պոյնուի
կրճին մէջ ամբողջութիւններ շինելով նոր
յարձակման կը պատրաստուէր :

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆ ԼՈՒՐԵՐ

Կաղի Օսման վաշալին Բլէֆուսթէն
երած և Ռազովայի կողմը քաղաքը
ըլլալուն զրոյցները վերջապէս սուտ
եղան :

Այս միայն ստորդ կերակի որ Օսման
վաշան Բլէֆուսթէն դուրս ելնելու փորձ
մ'ըրեր է դէպի Ռազովա, բայց Ռուսք
այն կողմերը մեծ զօրութիւն դու-
մարած ըլլալով բուռն յարձակում
մ'ըրեր են անոր վրայ և կատարի ու-
արիւնաւշտ կռուէ մ'ետեւ : Օսման
վաշան չկրնալով թշնամոյն բազմա-
թիւ ամբողջութեանց գլխիւ պատուել
Բլէֆուսթէն վերադարձեր է :

Պատերազմ լրագիրը կրնէ թէ վի-
րոյիշեալ կռուին Ժամանակ Օսման
վաշայի բանակէն քանի մը զօրականք
յաջողեր են Ռուսաց գլխերն անցնել
և ողջ առողջ Օրլանովի հասնելով վե-
րոյիշեալ կռուին վրայ մանրամասն
տեղեկութիւններ բերել :

Աստի կը ծանուցանեն եղեր թէ
Ռուսերը վերոյիշեալ կռուին մէջ շատ
կորուստ ունեցեր են, այնպէս որ

ամբողջութեանց փոփոխութիւնները իրարմէն չեն փոխարինուիր։

Օսմանեան զօրքն երեք թնդանօթ, բազում տուար և նպարով լի սայլեր առեր են։

Վազմէ լրագիրն ալ հետեւեալ տեղեկութիւնները կը հրատարակէ։

«Վերջին կառավարութեան հետ հեռագրէ մը կը հասկցուի թէ Ռազմայի կողմը միտած կռիւներն ոչ թէ Օսման փաշայի՝ այլ այն կողմերը գտնուող Օսմանեան զօրաց հետ եղած են։

«Յիշեալ հեռագրին նայելով, եօթն վաշտ հետեւակէ, գունդ մը հեծեալէ և 18 թնդանօթ բաղկացեալ Ռազմայի զօրաց մէջ ամրացեալ Օսմանեան զօրաց վրայ յարձակելով երկար և բռն կռուի մ'ետեւ ետ քաշուեր է՝ հազարէն աւելի մեռեալ թողով։

«Այս պայծառ յաջողութենէն ետեւ մեր զօրքերն հարկաւոր դատեր են Ռազմայի թողու և լամի վրայ քաշուի, և այնպէս ըրեր են։

«Գարշով Օսման փաշայի, Բլէմլայի մէջ կեցած է միշտ։ Իւր դուրս յարձակելուն և դէպի Ռազմայ քաշուելուն լուրը պարզ թիւրիմացութիւն մ'էր, որուն պատճառ տուեր է Ռազմայի շուրջն եղած կռիւն և այն միջոցին Օսման փաշայի ըրած այլ և այլ յարձակումները Ռազմայ պաշարման գիծերուն դէմ։ Վերջապէս Բլէմլա մեր ձեռքն է միշտ։»

Վերջին հեռագիրը մը Ռազմայ բերդաքաղաքին Ռազմայ ձեռքն իշնալը կը հաստատէ, որով Օսման փաշային Վիտիկի կողմը քաշուելու ճանքան ալ գոյուած կը համարուի։

Գաղղիական Բոսնիոյ թիւսօնէլ լրագիրը կըսէ թէ Բլէմլայի շուրջը Ռազմայ դարձուցած պաշարման դիմն 30 մըն երկայնութեամբ շրջանակ մը կը կազմէ, ուր 700 թնդանօթ թուրքաց զինուորուն կ'սպառնան, չանպարհներէն ոմանք ընդարձակ փոսերու փոխուած և նորոգեալ շարժուն զոտանէններու միջոցաւ անանցանելի եղած են։ Չորերէն մէկ քանիւն Ներքեւ ականներ փորուած են, չայնպէս որ անոնց մէջէն անցնելու փորձ փորձող թուրք զօրքերն անմիջապէս կը ջնջուին։

Ասկէջ զատ Ռուսերը շարժուն ապստամբարաններ ունին, որք ամեն յարձակմանց դէմ կը պաշտպանեն զանոնք, և իրենք յարձակում ընել ուզած ժամանակին ալ պատենչի և միանգամայն սանդերու (հալան թօսփու) տեղ կը ծառայեն, որոց սարսափելի արդիւնքն արդէն կրած են թուրքերը։

Ահմէտ Մուլաթար փաշայէն նոյ. 13/25 թուով հետեւեալ հեռագիրն եկած է Սպարապետի դուռն։

«Քանի մ'օրէ ի վեր կարեւոր անցք մը պատահած չէ հոս։ Թշնամին իւր հին դրից մէջ է։

«Թշնամայն գրաւած տեղերէն հոս եկող քանի մ'անձանց խօսքին նայելով, Պաշայի տէն եկող Ռազմայի զօրքերը Չիտէկանի և Գարաֆիլիսի միջև բանակած են։ Նէպի գետակին եզերքը գտնուող Ռազմայի վաշտերն յիշեալ գետակին շրջակայներն և կարիւնէն 6-7 ժամ հեռի գտնուող գիւղերը գնացեր են, մնացեալը ալ Բասէն-Սէֆէլայի կողմը կը քաշուին։

«Այս ամենէն կը հասկցուի թէ թշնամին ձմեռն անցուելու յարմար տեղեր կը փնտռէ։

«Այս վարկերն իսկ հասած վաւերական տեղեկութիւններէ կ'մնայուի թէ Ռազմայ առաւ և շրջակայներն եղած կռիւներուն մէջ իրենց զօրութեան կէսը կորուսեր են։ Այս մեծ կորուստներուն ինչպէս նաև ձմեռն խստութեանը պատճառաւ կը կարծեմ որ թշնամին զինուորական գործողութիւնները դադարեցնելու պիտի հարկադրի։

«Չիտէն առատարար տեղափոխութիւն շրջակայները ծածկեց, և մինչև կանգուն մը բարձրութեան հասած է լեռանց վրայ։

«Երկու հազարապետ, մէկ թեւապետ և երկու զօրակաւք, որ կըրցեր են կարսէն փախչիլ, լուր բերին ինձ թէ Ռազմայ հաջորդ փաշա և Սուլթանի Թապեաններուն կողմէն քաղաքը կը մոտենին։»

Կարիւնէն նոյ. 3 թուով մայրաքաղաքիս Լա թիւրքի լրագրին ուղղեալ նամակի մը մէջ հետեւեալ տողերը կը կարդանք։

«Մեր քաղաքը խիստ ողբալի վիճակի մէջ է, վասն զի 23 օրէ ի վեր խլամը և Գրիտոսեայք իրենց խանութները բացած չեն, և դուրսէն փաշայ, ամուր, գարի, յարդ, խոտ, ալիւր և ուրիշ դրսէն է նպար բերելու քաղաքս։ Տեղական իշխանութիւնն իմաստուն միջոց մը ձեռք առաւ. ամեն օր ձիւր ալիւր կուտայ հացադորձաց, որպէս զի հաց եփեն, և այս բանն արդէն մեծ բարիք մ'է։»

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 28 նոյ. Երեւոյթանաց ժողովին մէջ ներքին գործոց նախարար Պ. Վելլ առաջարկեց, որ երբեք հաշուեցոյցին մէջն ուղղակի տրոյ վերաբերեալ տարաւորութիւնները դատուելով անյապաղ քննուին։ Այս առաջարկութիւնն ըստ իրաւանց երմաւ կան յանձնարարութիւն յղեցաւ։

Յետոյ ժողովն ստիպողականութիւն ընդունեց ձախ կեդրոնի անդամ Պ. Պարտուի առաջարկութեանց վրայ, որ պաշարման վիճակի և մասկը վերաբերեալ օրէնքները բարեփոխելու գիտում ունենին։ Վերջապէս ժողովը ներքին գործոց նախարար Պ. Պարտուի ընտրութեան վերաբերեալ վիճարանութիւնն, որ այսօր պիտի կատարուէր, յետաձգեց։

Փարիզ 28 նոյ. Երեւոյթանաց ժողովը միաձայնութեամբ ստիպողականութիւն ընդունեց ձախ կեդրոնի անդամ Պ. Պարտուի առաջարկութեան վրայ, որ արուեստից ներկայ նեղ վիճակին պատճառները քննելու համար յանձնարարութիւն մ'անուանել կը խնդրէր։ Յիշեալ յանձնարարութիւնն հիւղարկելի պիտի ընտրուի։

Հալով 28 նոյ. Բուռն մարտի մ'ենելով Մանչի ծովուն մէջ երսուն նաւ ընկղմեցան։ Բազմաթիւ մարդիկ զոհ եղած են։

Վիէննա 27 նոյ. Աւստրո-Հունգարական պատուիրակութիւնները դեկտ. 5ին Վիէննա պիտի գումարին։

Փարիզ 27 նոյ. Երեւոյթանաց յանձնարարութիւնն առաջարկեց, որ մայիս 18ին ի վեր նախորդ նախարարութեան բացած լուր յաւելուածական վարկերն ապօրէն հրատարակուին։

Վիէննա 27 նոյ. Լրագիրը ոմանք Հոմար կամ Վիէննա տիկը խաղաղութեան համար հաւանական նախարարութեանը դեկտ. 5ին Վիէննա պիտի ժողովաւորել կը նշանակեն։

Կայսրն ութ օրէն Վիէննա պիտի վերադառնայ։

Փարիզ 28 նոյ. Մաք-Մազոն մարաշախտը միշտ կընդգիծուի, երբեք հաշուեցոյցին քննութիւնը պահանջելով։ Նախարարը իր բեւ ստիպողական ներկայեցին զայն, և ստիպողականութիւնն ընդունուեցաւ։

Երեւոյթանաց ժողովը ընդունեց քննութեան առաջարկութիւնը։

Փարիզ 27 նոյ. Մաք-Մազոն մարաշախտ ընդգիծուած թիւերը կը շարունակէ առանց ուղղելու դոյացած յուրման։ Մայրաքաղաքի միջոցները կը կասկածուին։ Երեւոյթանային աշակող մերն երեւոյթանային ժողովը լուծման դէմ են։ Թշնամայնութիւն ծանուցում

ներ փակած տեղեկեցան պատերուն վրայ, խռովայող աղաղակներ արձակուեցան և քանի մը ձերարկաւորութիւնք եղան։

Փարիզ 28 նոյ. Փարիզի Սինաթրական սենեակներուն պատուիրակներն ուղերձ մը մատուցին Մաք-Մազոն մարաշախտին, արուեստից ապագայակից վիճակը ծանուցանելով, և միանգամայն խորհուրդ տալով իրեն որ վերջին ընտրութեամբ երկրին յայտնած բաղձանքը գոհացնէ և զժողովեանց երկիւղները փարատէ։

Լոնտոն 28 նոյ. Արտաքին գործոց նախարար Լորտ Տէրպլի առեւտրականութիւն մ'ընելով ըստ թէ չիրար ընդունիլ որ Հնդկաստանի հետ Անգլիոյ հաղորդակցութեան բուն գիծն Եփրատայ հովտէն անցնի, և աւելցուց թէ ըստ իւր կարծեաց՝ մինչև որ Սուէի ջրանցքին գիծը չիտի կամ չի չիտի, Անգլիոյ Հնդկաստանի հետ հաղորդակցելու բաւական գիծ մ'ունի։

Փարիզ 28 նոյ. Ժողովներն երէկ բացուեցան Պ. Պարտուի ձեռնարկ։

Լոնտոն 28 նոյ.	
Օսմ. Բոսն.	40
Փոթ.	4863 40 1/2
•	4869 40 1/8
•	4871 36 3/8
•	4872 47 3/4
•	4873 40
•	Երկրորդ 34 1/8
Անգլ. Բոսն.	96 7/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝ Արտադարձութեան Գերմանիոյ պէյի որդի Ալիք պէյ՝ Վեհ Սուլթանին քարտուղար անուանեցաւ։

Դանուբի բանակին հրամանատարներէն Ֆերիք Նէմիպ Խաչան Կ. Պոլսի կոչուելով, Սպարապետի դուռը կազմուած զինուորական նոր խորհրդի մեծամ անդամ անուանեցաւ։

Վեհ Սուլթանն Ալիքի անուարող սոյ կուսակալ Վեհ Սուլթան Վէֆիք փաշայի յանձնարարութեամբ երրորդ կարգի Մէհմետի պատուանշան չընտրեց Ալիքի անուարողը Հայոց առաջնորդ Գեր. Գէորգ վարդապետին ի վարձատրութիւն հաւատարմի և անձնուէր ծառայութեանց, զորս ներկայ ծանր պարագայից մէջ մատուցած է և կը մատուցանէ կայսերական տէրութեան։

Օսմանեան Վէհ Սուլթանը կը ծանուցանէ թէ Բ. Դուռն յայտաբարութիւն մը պիտի ուղղէ Պալլադուրայ, ծանուցանելով թէ Վեհ Սուլթանը իրականաբար ներս մ'ալիտի չընտրեց այն ամեն Պալլադուրայ՝ որք հնազանդութիւն յանձն առնուն։

Ասիոյ պատերազմներուն մէջ Շէյխ Ապաուլլահի հրամանատարութեան ներքեւ կուսող քրիստոնէական գլխաւորներէն վեց քրիստոնէականներ են, Վեհ Սուլթանին հրամանաւ անցեալ շարժու Կ. Պոլսի հասան, և Վեհ Սուլթանին սննդակալեալ Հաֆիզ փաշայի ապարանքն հիւրընկալեցան։

Յիշեալ քրիստոնէական պարս փաղը Վեհ Սուլթանին ներկայանալու պատիւ պիտի ունենան։

Հայաստանի վերջին պատերազմաց մէջ վերաւորեալ Լիւա Հասան փաշան և Միրիսիւրան Ահմէտ փաշան ինքիւնքին զարմանել տալու համար շարժութ օրը Կ. Պոլսի եկան։

Շարաթ իրիկուն՝ Ալիքի անուարող սոյ երկրորդ օրը եկած իսլամ փաթախականներ Սիրքէհիէն նաւակով մ'իւսկիւտար անցած ժամանակ նաւակը դարձաւ, և մէջը գտնուող ինն հօգիէն երեք ծովակուր եղան, նաւակըն ալ ի միասին։

Իզմիրի Արշալոյս լրագրին վերջին թուոյն մէջ հետեւեալ կը կարդանք. «Թշնամայն և Վեհ Սուլթանի զինուորաւոր մի, կրօնի բողոքական, որ կազմարարութիւն կընէր ի քաղաքիս, ննջեալ օրն բաւուեցաւ խաղալի դրամափոխի (գաղաղական) ծանր յանցանօք։ Այս չարագործին քով գտնուեր են խաղալիսեալ մեծ ճիւղեր և մեծ ճիւղ քաղաքներ։»

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՅՈՒՅՅԻՆ ԳԱՂԱՔԱՊԱՆ ԶԻՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՒԱՄ Բ.

Կաղաքագրութեան քաղաքային զինուորական (Շար. և վերջ Դեհ Բեհ 2032)

Յօդ. 8. — Մէն մի կուսակալութիւն՝ մէկ կամ քանի մը բաժին քաղաքային զինուոր կը կազմէ։

Կ. Պոլսի և արուարձանները կուսակալութիւն (վիւայթ) մը կը կազմեն։

Երեք կամ առաւելն հինգ գունդը (ալայ)՝ կուսարմին (իւլա) մը կը կազմեն։ Գունդերն ալ երեք կամ առաւելն չորս վաշտ (թապուր) կը բաղկանան։ Վաշտերն առաւել չորս և առաւելն տասն գումարտակ (պէյլիւ) կը պարունակեն։ Գումարտակներն ալ 80-100 մարդէ կը բաղկանան։

Յօդ. 9. — Զօրաբաժինը Ֆերիքի մը, կիսաբաժինն ալ Լիւլայի մը հրամանատարութեան ներքեւ կը գործէ։ Այս զօրավարը «Ֆերիք կամ Լիւլա Ալլա» քաղաքային զինուորութեան (Ասաթերի միջին ֆերիքի եւ իւլայի) պիտի կոչուին։

Գումարտակ և վաշտերուն սպայից թիւն ալ հետեւեալ կերպիւ որոշուած է. Գումարտակ մէկ զնդապետ (միւլայ) և երեք զնդապետ տեղակալ (գալմապաւ) պիտի ունենայ։

Վաշտը պիտի ունենայ երեք կամ չորս հաղարապետ, երեք կամ չորս թեւապետ (գոյ-ալապ), մէկ զօրակիր, երկու բժիշկ, երկու վիրաբոյժ։

Գումարտակը պիտի ունենայ մէկ հաւրերապետ, մէկ տեղապահ (միւլայթիւ) մէկ յիւսնապետ (պալ շալուշ), մէկ գումարտակապետ (պէյլիւ Էմիլի), չորս յիւսնապետ տեղապահ (շափուշ), ութ տասնապետ։

Յօդ. 10. — Սուլթանը քաղաքային զինուորութեան ընդհանուր վարչութիւնը Միւլայի կամ Ֆերիքի տնօրէնութեանը զինուորականի մը յանձնած է, որ «ընդհանուր հրամանատար քաղաքային զինուորաց» կը կոչուի, և զօրաբանակաց հրամանատար Միւլայիներուն տնօրէնութեան իրաւաստութեան ներքեւ։ Միւլա սպայից ընտրութիւնը կանոնաւոր զօրաց համար ի գործ դրուած կանոնին համեմատ կը կատարէ։

Յօդ. 11. — Զօրավարը և սպայք քաղաքային զինուորաց մէջն պիտի ընտրուին. բայց մինչև որ քաղաքային զինուորութեան մէջ սպայներ հասնին, կամ եթէ պէտք ըլլայ, զօրավարը և սպայք կանոնաւոր զօրաց բանակին մէջն ընտրուին։

Յօդ. 12. — Քաղաքային զինուորաց ի զէն կոչուած ժամանակ յիշեալ զինուորութեան երմտական զորքերը Մատաւարարութեան մը կը յանձնուին, որոյ տնօրէնները «Գործակալը Մատաւարարութեան» (Մէմուրանը Խարէ) կանուանին։ Զօրավարը և սպայք չեն կրնար մատաւարարութեան զորքերուն խառնուիլ։ Մատաւարարութիւնը կը բաղկանայ տեսուչ մը, զինուոր համարակալ մը, պէտք եղածին չափ տաւարակալներէ, հարկաւորապետ տնօրէնն ունեցող դանձապահ մ'և հանդերձապետ մը։

Տեսուչը զօրաբաժինն կապուած է համարակալը գունդին, և տաւարակալները վաշտերուն. իսկ գանձապահն և հանդերձապետն իրենց պաշտօնը վաշտերուն քով կը կատարեն։

ՀԱՏՈՒԱՄ Գ.

Այլ և ալ քաղաքագրութեան

Յօդ. 13. — Երբոր քաղաքային զինուորը

